

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ  
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԳՐԱՑՈՒՑԱԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության գրադարանների միասնական մատենագիտական համահավաք գրացուցակի (այսուհետ՝ համահավաք գրացուցակ) ստեղծման գործընթացը:

2. Համահավաք գրացուցակը մատենագիտական գրառումների ամբողջություն է, որը ներառում է գրադարանային հավաքածուների կազմը և բովանդակությունը:

3. Համահավաք գրացուցակը կազմված է գրադարանային փաստաթղթի (այսուհետ՝ փաստաթուղթ) հետևյալ նկարագրական բաժիններից՝

1) *վերնագիր* (փաստաթղթի հիմնական վերնագիրը, ինչպես նաև այլ վերնագրեր (այլընտրանքային, զուգահեռ, այլ).

2) *մերավոր պարասխանաարուներ*՝ տեղեկույթ փաստաթղթի մտավոր կամ գեղարվեստական բովանդակության ստեղծմանը մասնակցած անձանց կամ կազմակերպությունների մասին.

3) *հրատարակություն*՝ տեղեկույթ տվյալ հրատարակության փոփոխումների և առանձնահատկությունների մասին՝ նույն փաստաթղթի նախորդ հրատարակության համե-

մատ: «Տարբերակ», «Թողարկում», «Խմբագրություն», «Վերատպություն», ինչպես նաև նախորդ հրատարակություններից դրանք տարբերակող այլ տերմիններ.

4) *հրատարակչական փոխախեր* տեղեկույթ հրապարակման տեղի և ժամանակի, փաստաթղթի տարածման և պատրաստման մասին, ինչպես նաև տեղեկություններ այն պատրաստողի, հրատարակողի, տարածողի մասին.

5) *ֆիզիկական նկարագրություն* տեղեկույթ էջերի, անհրաժեշտության դեպքում դրանց չափսերի, պատկերագրողումների և ուղեկցող նյութի մասին.

6) *մատենաշարային նկարագրություն* տեղեկույթ բազմամաս փաստաթղթի մասին, որի առանձին թողարկումը գրացուցակի կազմման նյութն է.

7) *սրանդարը համար* (կամ նրա այլընտրանքի)՝ նշվում են միջազգային ստանդարտ համարները, որոնք կանոնագրված կարգով շնորհվել են փաստաթղթին: Ստանդարտ համարները նշվում են ընդունված հապավումներով.

8) *հասանելիության պայմաններ* տեղեկույթ փաստաթղթի գնի կամ համառոտ տեղեկույթ փաստաթղթի հասանելիության այլ պայմանների մասին.

9) *ծանոթագրություն*՝ լրացուցիչ տեղեկություն փաստաթղթի մասին, որը չի տրվել նկարագրության այլ բաժիններում, օրինակ, տպաքանակը:

4. Համաձայն սույն կարգի՝ «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հայաստանի ազգային գրադարան) համակարգում և ձևավորում է համահավաք գրացուցակը:

## II. ՀԱՄԱՀԱՎԱՔ ԳՐԱՑՈՒՑԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

5. Համահավաք գրացուցակն ստեղծվում է սույն կարգի 3-րդ կետի նկարագրական բաժինների համաձայն՝ երկու ձևով՝

1) տպագիր (ընթացիկ և հետադարձ մատենագիտություն).

2) Էլեկտրոնային:

6. Համահավաք գրացուցակի կազմման գործում ընդգրկված են բոլոր պետական և հանրային գրադարանները, իսկ ոչ պետական և համայնքային գրադարաններն ընդգրկվում են սեփական նախաձեռնությամբ՝ դրա մասին դիմում ներկայացնելով Հայաստանի ազգային գրադարան:

7. Էլեկտրոնային համահավաք գրացուցակի կազմմանը մասնակցող բոլոր գրադարանները Հայաստանի ազգային գրադարանի հետ կնքում են մատենագիտական տեղեկույթի անվճար տրամադրման մասին պայմանագրեր: Պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է լիազոր մարմինը:

8. Համահավաք գրացուցակի կազմման մասնակից գրադարաններն ստացված գրադարանային փաստաթղթերի մասին սույն կարգի 3-րդ կետում նշված նկարագրական տվյալները և իրենց մոտ առկա օրինակների թիվը 7 օրվա ընթացքում մուտքագրում են համահավաք գրացուցակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ